ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի մարտի 24-ին

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 32. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը.

2) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.

4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը.~~4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը.~~

5) առաքինության ստուգման բացասական արդյունքները:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանած տիպային կանոնների հիման վրա: